ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/107

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.07.2018թ. թիվ 03/26-3/12966-18 գրությամբ «ՖԱՅՐ ՊՐՈ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00802234) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 12.07.2018թ. թիվ 01.3/11/504163-18 և 13.07.2018թ. թիվ 01.3/11/504254-18 գրությունների հիման վրա, 16.07.2018թ. նախաձեռնել է «ՖԱՅՐ ՊՐՈ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 12.07.2018թ. թիվ 01.3/11/504163-18 և 13.07.2018թ. թիվ 01.3/11/504254-18 գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությանն է ուղարկել ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-026ԹԹ/2018/Վ ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՖԱՅՐ ՊՐՈ» ՍՊԸ-ի նողմից ներկայացված փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «ՖԱՅՐ ՊՐՈ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՖԱՅՐ ՊՐՈ» ՍՊԸ-ն 25.07.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

« Գործի նախապատմությունը և փաստերը.

«Ֆայր Պրո» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 28.06.2018թ. մասնակցել է ՀՀ ոստիկանության կարիքների համար (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կազմակերպված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-026ԹԹ/2018/Վ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և 12-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.07.2018թ. հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 09.07.2018թ.տրվել է եզրակացություն, համաձայն որի «Ֆայր Պրո» ՍՊԸ-ն 28.06.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օր) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.07.2018թ. ժամը 11:00 տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 12-րդ չափաբաժնով՝ «ՖԱՅՐ ՊՐՈ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն, քանի որ հաջորդաբար ցածր գին առաջարկած մասնակից չկա, այդ իսկ պատճառով 12-րդ չափաբաժինը համարվում է չկայացած:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

ա) «Ֆայր Պրո» ՍՊԸ-ի մոտ 28.06.2018թ. առկա ՀՀ պետական բյուջեի նկատմամբ 24,695 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ֆայր Պրո» ՍՊԸ-ն 28.06.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրը) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 24,695 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Վերոնշված խնդրի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքի վրա.

1. Ըստ «Ֆայր Պրո» ՍՊԸ-ի միասնական հաշվի արտատպումի՝ (www.taxservice.am կայքի համապատասխան էջի արտատպում)՝ «Ֆայր Պրո» ՍՊԸ-ն 28.06.2018թ. (հայտը ներկայացնելու օրը) ունեցել է 24,695 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն՝ պետական տուրքի գծով:

2. 14.06.2018թ. (հայտը ներկայացնելուց 14 օր առաջ) «Ֆայր Պրո» ՍՊԸ-ն «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի «Էջմիածին» մասնաճյուղի միջոցով Կենտրոնական գանձապետարանի միասնական հաշվին (900008000490) փոխանցել է 25,000 ՀՀ դրամ՝ որպես նպատակ նշելով՝ «Պետական տուրք», ստացող՝ Կենտրոնական գանձապետարան:

3.Հայտը 28.06.2018թ. ներկայացնելուց հետո է միայն պարզվել, որ պետական տուրքի մասով «Ֆայր Պրո» ՍՊԸ-ի միասնական հաշվին վճարված գումարը չի ծառայել իր նպատակին և պետական տուրքը չի մարվել, քանզի նշված վճարումը պետք է կատարվեր ոչ թե «Ֆայր Պրո» ՍՊԸ-ի միասնական հաշվին՝ ստացող՝ Կենտրոնական գանձապետարան (900008000490), այլ ստացող ՀՀ ԿԱ ՊԵԿ (կոդ 81)-ի՝ 900005166021 հաշվեհամարին:

4.Արդյունքում «Ֆայր Պրո» ՍՊԸ-ն 10.07.2018թ. կրկին փոխանցել է պետական տուրքի գումարը՝ 25 000 ՀՀ դրամը արդեն ճշտված հաշվեհամարին՝ ճշտված ստացողով (ՀՀ ԿԱ ՊԵԿ (կոդ 81)-ի՝ 900005166021):

Վերոշարադրված փաստերը վկայում են, որ «Ֆայր Պրո» ՍՊԸ-ի մոտ առկա 24,695 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է Ընկերության չիմացության և թյուրիմացության պատճառով, որի հետևանքով պետական տուրքի գումարը հայտը ներկայացնելու օրից առաջ վճարվել է սխալ հաշվեհամարին:

Այս փաստերը ուսումնասիրելուց ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձ Է.Սարգսյանին խնդրում ենք հաշվի առնել ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձ Մ.Անանյանի կողմից 21.06.2018թ.կայացրած թիվ ՍՑ-ԱՄ-2018/73 որոշումը:

Մասնավորապես, 21.06.2018թ. կայացրած թիվ ՍՑ-ԱՄ-2018/73 որոշմամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձ Մ.Անանյանի կողմից արձանագրվել է հետևյալը.

«ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձ Մ.Անանյանին ուղղված գրության համաձայն՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, 2018 թվականի հունվարի 1-ից սկսած,

միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով վճարումները կատարում են միասնական հաշվին: Հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետները սահմանված են օրենսգրքի համապատասխան բաժիններով, իսկ հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը՝ օրենսգրքի 319–րդ հոդվածով: Հարկային պարտավորությունների մարման կարգը սահմանված է օրենսգրքի 325-րդ հոդվածով, իսկ վերջինիս վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումները՝ օրենսգրքի 456-րդ հոդվածով: Նույն գրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը հայտնել է, որ վերոնշյալ կարգավորումների ծրագրային ապահովման ներդրումը կրում է պիլոտային բնույթ, ուստի անհարժեշտ է հաշվի առնել 2018թ. հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելու հանգամանքը:

Այսպիսով, համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 22.05.2018թ. տրամադրված եզրակացության՝ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 667,937 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Միևնույն ժամանակ ուսումնասիրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, գտնում եմ, որ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն «ԵԲ-ԳՀԱՊՁԲ-18/183» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրության մեջ մատնանշված պատճառներով, առկա է Ընկերության իրազեկված չլինելու հետևանքով ժամկետանց հարկային պարտավորություն արձանագրվելու իրավիճակը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ի վարքագիծը, գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն»:

Վերոնշված փաստերի ուսումնասիրությունից և 21.06.2018թ.կայացրած թիվ ՍՑ-ԱՄ-2018/73 որոշման հետ համադրումից հետևում է, որ 28.06.2018թ. «Ֆայր Պրո» ՍՊԸ-ն, գիտակցելով, որ իր միասնական հաշվին դեռևս 14.08.2018թ. փոխանցել է պետական

տուրքի գումարը (25,000 ՀՀ դրամ), 28.06.2018թ. մասնակցել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-026ԹԹ/2018/Վ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին, սակայն ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացությամբ պարզվել է, որ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ Ընկերությունը ունի 24,695 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն՝ պետական տուրքի գծով, մինչդեռ ինչպես նշվել է, Ընկերությունը նշված գումարը վճարվել էր դեռևս 14.04.2018թ., որը սակայն կատարվել էր սխալ հաշվեհամարով:

Գտնում ենք, որ տվյալ դեպքում առկա է Ընկերության իրազեկված չլինելու հետևանքով (նշված գումարը Պետական գանձապետարանի միասնական հաշվին չփոխանցելու վերաբերյալ) ժամկետանց հարկային պարտավորություն արձանանգրվելու իրավիճակը, ուստի «Ֆայր Պրո» ՍՊԸ-ն, մեր կարծիքով, «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-026ԹԹ/2018/Վ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած որևէ պարտավորություն:

բ) «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-026ԹԹ/2018/Վ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրության խախտումներ թույլ տալու վերաբերյալ, որը հանգեցրել է «Ֆայր Պրո» ՍՊԸ-ի իրավունքների խախտմանը.

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.07.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցմանը՝ 09.07.2018թ.ստացվել է եզրակացություն, համաձայն որի «Ֆայր Պրո» ՍՊԸ-ն 28.06.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրը) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.07.2018թ. ժամը 11:00 տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 12-րդ չափաբաժնով՝ «Ֆայր Պրո» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն, քանի որ հաջորդաբար ցածր գին առաջարկած մասնակից չկա, այդ իսկ պատճառով 12-րդ չափաբաժինը համարվում է չկայացած:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի

տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ստացվում է մի իրավիճակ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ոչ միայն «Ֆայր Պրո» ՍՊԸ-ի հայտը չի մերժվել, այլև՝ գնահատող հանձնաժողովի կողմից չի տրվել Կարգի 45-րդ կետով սահմանված մասնակցի կամ կոմիտեի կողմից մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հնարավորություն:

Ավելին՝ gnumner.am համացանցային կայքում հրապարկված թիվ 3 արձանագրությունը հրապարակվել է շատ ուշ և, մեր կարծիքով, դիտավորությամբ, հրապարակման ամսաթիվը չի հրապարակվել և Ընկերությունը առաջացած խնդրի վերաբերյալ հնարավորություն է ունեցել իրազեկվել միայն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում:

Վերոհիշյալի արդյունքում խախտվել է Կարգի 45-րդ կետով երաշխավորված մասնակցի իրավունքը լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու վերաբերյալ, որի հիման վրա վերջինիս տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հաշվի առնել նշված փաստերը և «Ֆայր Պրո» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ

պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/107 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.07.2018թ. թիվ 03/26-3/12966-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ոստիկանության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 12.07.2018թ. թիվ 01.3/11/504163-18 և 13.07.2018թ. թիվ 01.3/11/504254-18 գրությունները, «ՖԱՅՐ ՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից Բողոքներ քննող անձին 25.07.2018թ. ներկայացրած գրությունը, «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-026ԹԹ/2018/Վ» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-026ԹԹ/2018/Վ» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 02.07.2018թ. նիստի թիվ 2 և 10.07.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, «ՖԱՅՐ ՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած մասնակցության հայտի պատճենը.

ՀՀ ոստիկանության կարիքների համար բժշկական ապրանքների գնման նպատակով կազմակերպված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-026ԹԹ/2018/Վ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) հայտ է ներկայացրել «ՖԱՅՐ ՊՐՈ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-026ԹԹ/2018/Վ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 02.07.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով «ՖԱՅՐ ՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 225,000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով «ՖԱՅՐ ՊՐՈ» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ ոչպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գին ներկայացրած մասնակից:

Հանձնաժողովը որոշել է նաև, Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «ՖԱՅՐ ՊՐՈ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 09.07.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՖԱՅՐ ՊՐՈ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 28.06.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 24,695 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Ս.թ. հուլիսի 10-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ Հանձնաժողովը՝ արձանագրելով «ՖԱՅՐ ՊՐՈ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելու օրվա ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու, ինչպես նաև Ընթացակարգի շրջանակներում հաջորդաբար ցածր գին ներկայացրած մասնակից չլինելու փաստը՝ Ընթացակարգը 12-րդ չափաբաժնի մասով հայտարարել է չկայացած:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման

չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:
- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

«ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-026ԹԹ/2018/Վ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.15 կետի համաձայն՝ Կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամա¬դրում է հարցման մասին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը

չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 7.16 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Նույն հրավերի 7.15-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Նույն կետով նախատեսված լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ ըստ «Ֆայր Պրո» ՍՊԸ-ի միասնական հաշվից արտատպված տվյալների՝ «Ֆայր Պրո» ՍՊԸ-ն 28.06.2018թ. ունեցել է 24,695 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն՝ պետական տուրքի գծով: 14.06.2018թ. «Ֆայր Պրո» ՍՊԸ-ն Կենտրոնական գանձապետարանի միասնական հաշվին

փոխանցել է 25,000 ՀՀ դրամ՝ որպես վճարման նպատակ նշելով՝ պետական տուրք: Սակայն, հայտը ներկայացնելուց հետո պարզվել է, որ պետական տուրքի մասով միասնական հաշվին վճարված գումարը Ընկերության կողմից թյուրիմացաբար փոխանցվել է այլ ստացողի հաշվեհամարին, ինչի արդյունքում և առաջացել է վերը նշված պետական տուրքի գծով ժամկետանց հարկային պարտավորությունը:

Ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- Ընկերության կողմից 14.06.2018թ. «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի «Էջմիածին» մասնաճյուղի միջոցով՝ պետական տուրքի գծով պարտավորությունների կատարման նպատակով, Կենտրոնական գանձապետարանի միասնական հաշվին (900008000490) փոխանցված 25,000 ՀՀ դրամի թիվ 3117 վճարման անդորրագիրը:

- Ընկերության կողմից 10.07.2018թ. «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի «Էջմիածին» մասնաճյուղի միջոցով՝ պետական տուրքի գծով պարտավորությունների կատարման նպատակով, Կենտրոնական գանձապետարանի միասնական հաշվին (ՀՀ ԿԱ ՊԵԿ (կոդ 81)-ի՝ 900005166021) փոխանցված 25,000 ՀՀ դրամի թիվ 7779 վճարման անդորրագիրը:

- «Ֆայր Պրո» ՍՊԸ-ի միասնական հաշվից արտատպում (www.taxservice.am կայքից), ըստ որի «Ֆայր Պրո» ՍՊԸ-ն 28.06.2018թ. ունեցել է 24,695 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն՝ պետական տուրքի գծով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին՝ տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Ֆայր Պրո» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 28.06.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 24,695 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

- Ընկերության կողմից 14.06.2018թ. պետական տուրքի գծով պարտավորությունների կատարման նպատակով, Կենտրոնական գանձապետարանի միասնական հաշվին (900008000490) փոխանցվել է 25,000 ՀՀ դրամ:

- Ընկերության կողմից 10.07.2018թ. պետական տուրքի գծով պարտավորությունների կատարման նպատակով, Կենտրոնական գանձապետարանի միասնական հաշվին (ՀՀ ԿԱ ՊԵԿ (կոդ 81) 900005166021) փոխանցվել է 25,000 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով, որ «Ֆայր Պրո» ՍՊԸ-ն 14.08.2018թ. վճարել է պետական տուրքի գումարը, և 28.06.2018թ. մասնակցել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-026ԹԹ/2018/Վ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին՝ վստահ լինելով, որ չունի պետական տուրքի մասով ժամկետանց հարկային պարտավորություն, սակայն ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացությամբ պարզվել է, որ Ընկերությունը նշված գումարը վճարել էր սխալ հաշվեհամարով, Բողոքներ

քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում առկա է Ընկերության իրազեկված չլինելու արդյունքում (վճարված գումարը Պետական գանձապետարանի միասնական հաշվին փոխանցված չլինելու վերաբերյալ) ժամկետանց հարկային պարտավորություն ի հայտ գալու փաստը: Ուստի, նշված հանգամանքներում ժամկետանց հարկային պարտավորության փաստի արձանագրումը չի կարող դիտարկվել որպես մասնակցի կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունք:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում մասնակցի տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, և հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելու արդյունքում Ընթացակարգը 12-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած, այսինքն, Հանձնաժողովի կողմից չի տրվել Կարգի 45-րդ կետով սահմանված՝ մասնակցի կամ կոմիտեի կողմից մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հնարավորություն, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունն ըստ էության զրկվել է Կարգի 44-րդ կետով նախատեսված լրացուցիչ տեղեկատվությունը Հանձնաժողովին ներկայացնելու հնարավորությունից, որը կարող էր ներկայացվել ինչպես Ընկերության կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող Հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ֆայր Պրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.07.2018թ. թիվ 03/26-3/12966-18 գրությամբ «ՖԱՅՐ ՊՐՈ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00802234) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ